

## ԲՈՎՔ

ԵՒ


• ԲՈՎՈՒՑ • ԱՇԽԱՏՈՒՅԹ

Վերջերս հանդիպած Աէնթ կմիէնի բովուց ձախորդութիւնք՝ հասարակաց հետաքրքրութիւնը շարժեց, իմանալու գիտնալու բովուց և անոնց մէջ աշխատաւորաց կենաց ընթացքը, որը կարծես բաժ. նուած յընկերութենէ՝ առանձնական կեանք մը կ'անցընեն և Ամէն աշխատաւորներէն առելի բովուց մէջ աշխատողաց վրայ շատ կը խօսուի, առանց ամեննեին անոնց վրայ տեղեկութիւն մ"ունենալու, ուստի շատերուն համար այս աշխատաւորաց կեանքը՝ խորհրդաւոր բան մ'է, և շեն կրնար մոտածել անոնց վրայ բայց եթէ սոսկմամբ: Այս կայն եթէ քննութեան առնոնք բովուց մէջ աշխատողաց կեանքը, կը տեսնենք որ այս հասարակաց գաղափարը նախապաշարմունք մ'է ընդգետ իրականութեան, և այս աշխատաւորաց կենաց հանդիպար և վաստակը շատ աւելի է քան մշակներուն և քաղաքաց մէջ գտնուած քանի մը տեսակ արուեստաւորաց Անհնար լինելով առնուլ ի քննութիւն մի առ մի ամէն երկրի և բովուց աշխատաւորաց կեանքը և օրական ցուցակը, կը շատանանք միայն քննութեամբ միոյն, որ է էանի բովքն ի Գաղղիա:

Բո՞ որ աշխատաւորաց խումբն երկու գասի բաժնուած է, սմանք կոչուին առաջունեանք և սմանք երեկոյնսմբ Առաւտեանք կ'ըստ կըսին իրենց աշխատութիւնք ճիշդ եւրոպական ժամը հինգին, իրենց պաշտօնն է ածուխ հանել և պատրաստել. ժամը ցորեկուան մէկին՝ ասոնք գուրս կ'ըլլեն իրենց ստորերկրեայ բնակութենէն: Իրենցմէ երկու ժամ վերջ՝ ժամը երեքին կը մտնեն միւնեները և կ'աշխատին զրեթէ մինչև կէս գիշեր, և պաշտօննին է խրամակարկատ ընել այն տեղերը որ պարապ մնացած են ածուխ հանելով, և դարձեալ ճամբաները բանար միով բանին ընդհանուր նորոգութիւն մ'ընել: Ուստի միջին հաշուով թէ յետիքս և թէ առաջինները կ'անցնեն գետնին խորը օրուան մէջ  $8\frac{1}{2}$  ժամէն 9 ժամ, այս հաշուին մէջ առնըով նաեւ ելլելու և իշնելու համար եղած կորուստը, իրենց աշխատանց տեղը հանելու և գառնալու ժամանակը, և կէս ժամ մը հանգստեան, գետնին խորը իրենց կերակուրը ուտելու համար, որ է երկու հաց և կարագ, զոր կը համեմեն սոխով և կամ ուրիշ խաւարտով մը ըստ եղանակաց:

Արդ հանելով աշխատութեան համար որոշեալ 9 ժամուց մէջէն ամէն եղած ժամանակի կորուստները, կը տեսնենք որ աշխատաւոր մը

օրուան մէջ կ'աշխատի 7½ ժամ միայն : Աշխատութիւնը ըստ ինքեան աւելի ծանր է քան զթարասագործներու \* արուեստն, թէպէտե եր՝ կուքն ալ ստիպեալ են աշխատիլ բնդհանրապէս ծնրազրեալ, առաջինն խճաքարերը ջրաբաշխական կրի մէջ զետեղելու համար, և երկրորդը՝ զածուխ խորտակելու համար, որոյ երակաց հաստութիւնը փա-ալ-դալէի ներքե հազիւ երրէք մի մետրը կ'անցնի, թէպէտ և այս նեղութեան զիւրաւ մարդ կը վարժի : Այն աշխատաւորները



### Գետնայարկ և կուղ Փա - տր - դալէի

որք բուն խորերը կ'աշխատին՝ աւելի աներկիւղ, յանդուգն և բուռն բնութեամբ, և տեսակ մը արհամարհութիւն ունին ընդդէմցերեկեան աշխատաւորաց :

Միւս մասամբ անոնք որ խորերը կ'աշխատին ամենեին օդոյ և ջերմութեան նեղութիւն չեն զգար, որովհետեւ հզօր օդամուղ մեքե-

\* . Տան սենեկաց կամ սրահներուն յատակը չինելու կերպ մը, աւելի ի դորձ ածեալ յիտալիա և մասնաւորապէս ի վենետիկ :

Հաներ շարունակ հանաց օդը կը փոփոխեն, ծծելով իւրաքանչիւր մանրերկրորդի մէջ 35-40 խորանարդ մետր օդ, մինչդեռ աշխատաւ ւար մը նոյնչափ ժամանակի մէջ կը չնչէ 50-60 լիդր օդ. Այս օդոյ կարգաւորեալ հոսանքնախ և առաջ 400 մեզր խոր երկրիս ունեցած ջերմութեան աստիճանը կը նուազեցընէ՝ վերած ելով ի 16-18 աստիճան, և երկրորդ օր մեծ քանակով թեամբ խառնուելով մօրից կազին հետ, կ'ոչնչացընէ անոր զօրութիւնն և որ և իցէ յանկարծական ձախող դիպուածոց գէմն կ'առնու:



### Որմնահատ աշխատաշորք

Հանաց սրահները հազիւ թէ կը բացուին, մէկէն պատով կը հրւսուին մինչեւ ցկամարս, որք հաստատեալ են լատինական կրկին Տ գրոյն ձեռվ երկաթներով, հեռի յիրերաց մի մետր, որք և իրարու հեռ միացած են ուրիշ երկաթեայ քառակուսի ձողերով, ինչպէս կը տեսնուի առաջին պատկերին մէջ, իսկ միւս պատկերը կը ներկայաց ցընէ երկու աշխատաւորք որք կ'աշխատին: Այս պատկերները օրինակուած են լուսանկարներէ, որք հանուած են հանաց մէջ մագնէսիոյ լուսով:

Իւրաքանչիւր աշխատաւոր, ինչպէս կը տեսնուի ի պատկերի, կը կըէ իւր գլխարկին վրայ կանթեղ մը:

Փոսէն ելլելէն վերջը իւրաքանչիւր աշխատաւորին առաջին գործն է ինքզինքը լուալ յոտից մինչեւ ցգլուխ: յիրաւի մաքրութիւնը այս

աշխատաւորաց համար առաջին և գլխաւոր յատկութիւնն է, ուստի ոչ միայն իրենք զիրենք, այլ նաև բովանդակ տունը ստէպ ստէպ կը լուան, մանաւանդ շարաթ օրերը: Եւ մարդութեան կանոնը այնքան խիստ է որ աշխատաւոր մը չի կրնար երբեք իւր սենեակը մտնել, առանց հանելու սանդիսոց առջև իւր կոշիկները, իսկ կինը միշտ գուլ պայով կը պտըտի տան մէջ:

Աշխատաւորաց տանց բուն տանուտէրը հանաց ընկերութիւնն է, որ վարձու կու տայ ոչինչ գնով մը անոնց: Լանի բովուց ընկերութիւնն օրինակի համար՝ ունի զանազան առւներ՝ զորս վարձու տուած է աշխատաւորաց ամիսը Յ-Ն ֆրանքով:

Տանց չէնքը ընդհանրապէս միօրինակ են, ե, կայն գծի մը վրայ շարուած իրարու հաւասար և երկայարկ, որ արտաքին տեսքով մեծ գործատան մը կը նամանին, յորում իւրագանիւր աշխատաւոր իւր ընտանեօքը կը զրաւէ երեք սենեակ, երկուքը բնակութեան և ննջելու, մի ցորեննոց և մի արտաքնոց, և զարձեալ տնակ մը խոզ պահեցու համար և Յ կալ երկիր, ուր կը պարտապի աշխատաւորն իւր հանդըստեան ժամուց միջոց: Ասոնց վրայ յաւել նաև 5-7 հարիւրափառը աստորին տեսակ ածուխ, զոր կու տայ ընկերութիւնն ամսէ ամիսի իւրաքանչիւրին ըստ եղանակին: Ասկէ զատ կայ նաև ինայութեան արկդ մը, ուր ըստ կամս եթէ աշխատաւոր մը ստորագրուի իրը անգամ, հատուցանելով ամէն ամիս Յ ֆր. խնայութեան արկդն օգնածիւնը կը մատուցանէ իրեն երբ հիւանդանայ, և այս օգնութիւնը աւելի առատ կ'ըլլայ (օրը 2 ֆր. 40 հարիւրչեայ) երբ աշխատաւորը յանկողին իշնայ վերըով մը, զոր ընդունած լինի աշխատելու տանեն:

Այս վիճակիս մէջ և այս պայմաններով հանաց մէջ աշխատողը կրնայ հանդիստ կեանք մանցընել, վաստըկելով ամէն օր 5-7 ֆր. ըստ որում կը հանէ շատ կամք քիչ ածուխ: Տղաք և երկրորդական ձեռնտու սատարը նուռազ կը վաստըկին քան զարս, ինչպէս է նաև ամէն արուեստի մէջ: 43 արուան տղայ մը կը վաստըկի օրուան մէջ 1 ֆր. 60 հարիւրչեայ, իսկ աղջկունք կ'աշխատին վեր ելած ածխոյ մէջէն զտելու հանելու բարերը:

Եթէ հանաց մէջ զանազան կարգի աշխատաւորաց աւուրչէքը բաղդատութեան առնուի՝ գրեթէ նոյնօրինակ դասակարգի ուրիշ աշխատաւորաց աւուրչէքին հետ, ինչպէս երկրագործաց, կը տեսնուի մէկէն առաջնոց առաւելութիւնը այլոց նկատմամբ: Ծնդհանրապէս հանաց մէջ աշխատողն կը վաստըկի քաղաքաց մէջ աշխատողներուն չափ, ունենալով այս առաւելութիւնները: այսինքն, օրերինին կամ աշխատութեան ժամանակին ըսենք՝ կարճ է, բնակութիւննին շատ աժան և վառելիք ոչինչ գնով: Ոյնպէս որ այն 5 ֆր. ամսական տան վարձը զոր կը հատուցանեն աշխատողք, ուրիշ տեղ կը հատուցանեն տասնուհինդ ֆրանք: և ածուխը զոր իրենք ձրիա-

բար կը վայլեն, կը վաճառուի մէկ ֆրանք և վաթսուն հարիւրչեայ առ հարիւրալիդր:

իսկ աշխատողաց կանայք գրեթէ բան մը չեն վաստրիիր, այլ հանգիստ կեանք մը կ'անցընեն զբաղելով միայն իրենց տնական գործողութեանց, այսինքն է կերակուր պատրաստել, տան մաքրութեան հոգ տանիլ և տղոց վրայ իրենց մայրական պարտքը կատարել. և մինչ բոլոր Գաղղիա կը գանգատի թէ երկիրն երթալով կը նուաղի յիւր բնակչաց, ասոնք զարմանալի բեղմնաւորութիւն մ'ունին և շատ ընտանիք կան մէջերնին որ 40 էն աւելի տղայ ունին, Միով բանիւ հանաց աշխատաւորն այնչափ թշուառ չէ ինչպէս որ կը կարծուի ընդհանրապէս. ընդհակառակն ուրախ զուարթէ կեանք մը կ'անցընէ, և այնչափ աւելի որչափ որ բուռն աշխատած է հանաց մէջ, Ունիննաև ամենայն զբաղանաց միջոցներ՝ ուր կրնան իրենց մարմայ կորովութիւնը և աշխուժութիւնը հանդիսացընել, և ես մարզիլ և կրթուիլ անոնց մէջ. ինչպէս են գնդակախաղ, նետաձգութիւն, և այլն, Սակայն առօնցմէ աւելի կը յաճախեն գիներբուաց և զուարճութեան տեղերը, որք այնպէս բազմաթիւ են որ զրեթէ չ տան՝ մէկ զինետուն կը վիճակի, և ուր առանց խնայութեան կը մսխեն իրենց օրական աշխատութեան վարձը. Ամեննեին խնայութեան զաղափար չունին և ըստ աւետարանական պատաւէրի չեն մտածեր երկրորդ օրուան պրուստը. այնպէս որ հարցընելով մի անգում ծերու մը որ շատ ժամանակ հանաց մէջ աշխատած էր, թէ ինչո՞ւ համար խնայութիւն չէր ըրած և քիչ մը դրամ չէր հաւաքած, պատասխան տուաւ թէ «Որչափ որ կը վաստըկէի այնչափ աւելի կը մսխէի». (Ch'est q'tint plus que j'gagnos, tint plus que j'dépinois).

## ԳԱՂԴԻԱԿԱՆ ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

1894 դեկտ. 10ին շաբաթ օրը երեկոյեան ժամը վեցին, տէրութեան ելմուխ պաշտօնարին օրինօք վաւերացեալ փոխառութեան մասնակցողք, տէրութեան Դանձատան մէջ թափեր էին 2340 միլիոն ֆառանք:

Այս ահագին գումարը՝ որոյ կշիռն է իրբե քառանոց ոսկի 755,000 հազարակրամ, և 11,700,000 հազարակրամ արծաթէ ստակ, միայն զետա առաջին մասն էր այն ահազին զրամագլխոյն. Տէրութիւնը բովանդակ փոխառութեան համար կը պահանջեր 869 միլիոն իրբե առաջին հատուցումն (vorsemement). փոխառութիւնն ստորագրողք ընդհակառակն տէրութեան տուին 14 միլիառ ու կէս (14 հազար հինգ հարիւր միլիոն) յորոց 2,340 միլիոն իրբե առաջին վճարումն, Ամէն լրազիրք, նոյն իսկ ներկայ կառավարութեան ընդդիմա-